Vtr գրանցել

**Համաձայնագիր թիվ 1**
**31.05.2019թ. կնքված N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 պայմանագրի**

*ք. Երևան* *«14» հունիսի 2019թ.*

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Ա. Հովսեփյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և Մանվել Ջալավյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Մանվել Ջալավյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 31.05.2019թ. կնքված N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4670000 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»

1.2 Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 1-ի:

1.3 Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 2-ի վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 6 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ | «Մանվել Ջալավյան» Ա/Ձ |
| ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24 | ք. Երևան, Նոր Նորք, Գալշոյանի փող. 19շ., 12բն |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ | Գործ. Հասցե. ք.Երևան Մոսկովյան 25 3/1տ. |
| Հ/Հ 900018005588 | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 01836525 | Հ/Հ 2050032155921001 |
| | ՀՎՀՀ 82934656 |
| ______________________ (ստորագրություն) | ______________________ (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 31 » մայիսի 2019թ. կնքված
ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով պայմանագրի «14» հունիսի 2019թ. կնքված N 1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/Հ | Անվանում | Չափման միավոր | Քանակ | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գինը (ՀՀ դրամ) | Տեխնիկական բնութագիր | Մատակարարման ժամկետ և վայր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթներ | դրամ | 1 | 4670000 | 4670000 | Համակարգչային հատուկ ծրագրային ապահովում, ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծության և մոդելավորման համակարգչային ծրագիր, որն ուղղված է ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) մեխանիզմի վերլուծության ընթացքում ավտոտրանսպորտային միջոցների (ԱՏՄ) և այլ օբյեկտների շարժման մոդելավորմանը և հաշվարկների կատարմանը (այսուհետ՝ Ծրագրային համալիր):<br>Ծրագրային համալիրը պետք է ապահովի.<br>1. Օբյեկտների շարժման հաշվարկն ու մոդելավորումը կինեմատիկ ռեժիմում.<br>- հաստատուն արագությամբ շարժման համար,<br>- հավասարաչափ փոփոխվող արագությամբ շարժման համար,<br>- ակնթարթորեն փոփոխվող արագությամբ շարժման համար,<br>- հետիոտնի վրաերթի հաշվարկման համար,<br>- ԱՏՄ-ի թափքի վրա առաջացած հետքերով հարաբերական արագության հաշվարկի համար:<br>2. Շարժման հաշվարկն ու մոդելավորումը դինամիկ ռեժիմում հետևյալ տեսակի ԱՏՄ-ի համար.<br>- միայնակ ավտոմեքենաների,<br>- կցորդով ավտոմեքենաների,<br>- երկանիվ տրանսպորտային միջոցների:<br>3. Շարժման հաշվարկն ու մոդելավորումը դինամիկ ռեժիմում ԱՏՄ-ի համար կախված հետևյալ ելակետային տվյալներից. | Պայմանագրի ստորագրման պահից մինչև 01.08.2019թ-ը ք.Երևան, Իսակովի 24 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | - օբյեկտների երկրաչափական և զանգվածային պարամետրեր,<br>- ծանրաբեռնվածություն,<br>- շարժիչի պարամետրեր,<br>- փոխհաղորդակի տվյալներ,<br>- ղեկային սարքավորման տվյալներ,<br>- արգելակային համակարգի պարամետրեր,<br>- ակտիվ  անվտանգության համակարգերի պարամետրեր (ABS, ESP),<br>- կախոցների կոշտության և մարման պարամետրեր,<br>- անվադողերի մակնիշ և չափային տվյալների պարամետրեր,<br>- կցորդման համակարգի պարամետրեր (ավտոգնացքների համար):<br>4. Շարժման հաշվարկն ու մոդելավորումը դինամիկ ռեժիմում ԱՏՄ-ների համար կախված շարժման միջավայրի հետևյալ ելակետային տվյալներից.<br>- հենման մակերեսի հետ անիվների կցման գործակիցը, այդ թվում այլ կցման գործակցով տեղային (լոկալ) մակերեսների հետ,<br>- հենման մակերեսի երկայնական և լայնական թեքությունների պարամետրերը, այդ թվում՝ կողային (պրոֆիլի) ինքնակամ փոփոխությամբ,<br>- քամու<br>5. Շարժման հաշվարկն ու մոդելավորումը դինամիկ ռեժիմում ԱՏՄ-ների համար՝ կախված շարժման հետևյալ պայմաններից.<br>- շարժման սկզբնական պարամետրեր,<br>- վարորդի ազդեցությունների ղեկավարման պարամետրեր,<br>- անիվների կախոցների երկրաչափական պարամետրերի փոփոխություններ,<br>- անիվների ճոճման/սահքի պարամետրերի փոփոխություններ:<br>6. ԱՏՄ-ի հաշվարկն ու մոդելավորումը հետևյալ մոդելների կիրառմամբ.<br>- հարվածի դասական մոդել,<br>- ուժային մոդել,<br>- ցանցային մոդել:<br>7. ԱՏՄ-ների բախման և շարժման ընթացքի օպտիմալացում:<br>8. Բազմաբաղադրիչ համակարգերի շարժման հաշվարկն ու մոդելավորումը.<br>- մարդու մանեկենների, | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | - երկանիվ տրանսպորտային միջոցների,<br>- փոխադրվող բեռի:<br>9. Դեֆորմացիաների էներգետիկ համարժեքի (էկվիվալենտի) հաշվարկի հնարավորություն:<br>10. Հետևյալ տվյալների բազաների կիրառման հնարավորություն.<br>- առավել տարածված ԱՏՄ-ների երկրաչափական և զանգվածային պարամետրերի տվյալների բազաներ,<br>- մաշտաբային պատկերների տվյալների բազաներ «Autoview» (2D) կամ համարժեքը,<br>- վնասվածքների էներգետիկ համարժեքի (էկվիվալենտի) ակնադիտական գնահատման համար բազաններ «EES Katalog Dr. Melegh» կամ համարժեքը,<br>- առավել տարածված ԱՏՄ-ների և այլ օբյեկտների եռաչափ պատկերների (3D) տվյալների բազաներ:<br>11. Սեփական (ներկառուցվող) գրաֆիկական ծրագրի կիրառման հնարավորություն.<br>- հարթության մեջ պատկերման համար,<br>- տարածության մեջ պատկերման համար,<br>- գրաֆիկական («растровых») պատկերների մշակման համար:<br>12. Տրանսպորտային միջոցների և շրջակա միջավայրի համար եռաչափ չափումների (3D) ֆայլերի հետ աշխատելու հնարավորություն:<br>13. Իրականացված հաշվարկների և մոդելավորումների փաստաթղթավորման հնարավորություն.<br>- հաշվարկի արդյունքները ներկայացնող տեքստի ձևով,<br>- ժամանակի կամ տարածության ֆունկցիայի մեջ շարժման պարամետրերի փոփոխությունը արտահայտող դիագրամաների տեսքով,<br>- երկչափ անիմացիայի տեսքով,<br>- եռաչափ անիմացիայի տեսքով:<br>14. Իրականացված հաշվարկների և մոդելավորման (դինամիկ ռեժիմում) պահպանման հնարավորություն առանձին ծրագրային ֆայլի տեսքով:<br>15. Ծրագրային համալիրը պետք է ունենա ռուսերեն ինտերֆեյս, ռուսերեն լեզվով ներկառուցված տեղեկատվական համակարգ:<br>16. Ծրագրային համալիրի տեխնիկական աջակցությունը պետք է տրամադրվի նաև ռուսերեն լեզվով:<br>17. Ծրագրային համալիրը պետք է ունենա առնվազն մեկ բանալի: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 18. Ծրագրային համալիրը իր մեջ պետք է ներառի տվյալ Ծրագրային համալիրի տարեկան թարմացումները:<br>19. Ծրագրային համալիրի արտադրության տարեթիվն առնվազն 2018 թվական:<br>20. Ծրագրային համալիրը պետք է ունենա լիցենզավորվորման վերաբերյալ հավաստում:<br>21. Ծրագրային համալիրի տրամադրման հետ համատեղ պետք է իրականացվի առնվազն 5 մասնագետների առնվազն 4 օրյա ուսուցում և որպես արդյունք տրամադրվի համապատասխան հավաստագրեր: Ուսուցման շրջանակներում ուսուցանվողների թվին համապատասխան Ծրագրային համալիրի բանալիների առկայության ապահովում՝ խմբային ուսուցումն առավել արդյունավետ կազմակերպելու համար:<br>22. Ծրագրային համալիրով ստացված արդյունքների  հայերեն լեզվով արտատպելու հնարավորություն: | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018005588
ՀՎՀՀ 01836525

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մանվել Ջալավյան» Ա/Ձ
ք. Երևան, Նոր Նորք, Գալշոյանի փող. 19շ., 12բն
Գործ. Հասցե. ք.Երևան Մոսկովյան 25 3/1տ.
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 31 » մայիսի 2019թ. կնքված*
*ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով պայմանագրի «14» հունիսի 2019թ. կնքված N 1 համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 48421100 | Սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթներ | | | | | | 4670000 | 4670000 | 4670000 | 4670000 | 4670000 | 4670000 | 4670000 | 4670000 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018005588
ՀՎՀՀ 01836525

(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Մանվել Ջալավյան» Ա/Ձ
ք. Երևան, Նոր Նորք, Գալշոյանի փող. 19շ., 12բն
Գործ. Հասցե. ք.Երևան Մոսկովյան 25 3/1տ.
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

(ստորագրություն)
Կ.Տ